

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1078-19.05.2025-SՀ-0110) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Nº	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով կատարվող լրացման արդյունքում նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվության՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման դեպքերը և կարգը կսահմանի Կառավարությունը: Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3.2-րդ մասում «միջոցները շրջանառությունից հանելու» բառերը փոխարինել «միջոցների» բառով, ինչի արդյունքում Կառավարության կողմից կսահմանվեն նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցման բոլոր դեպքերի վերաբերյալ կարգավորումները, այլ ոչ թե միայն շրջանառությունից հանելու:	Ընդունվել է Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3.2-րդ մասում «միջոցները շրջանառությունից հանելու» բառերը փոխարինվել են «միջոցների» բառով:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	1-ին կետում նշված առաջարկության ընդունմամբ պայմանավորված	Ընդունվել է Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝	Ընդունվել է

			առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416.1-ին հոդվածի վերնագրում «միջոցները շրջանառությունից հանելու» բառերը փոխարինել «միջոցների» բառով, իսկ նույն հոդվածի 1-ին մասում՝ «միջոցը շրջանառությունից հանելու» բառերը փոխարինել «միջոցի» բառով:	ՀՀ հարկային օրենսգրքի 416.1-ին հոդվածի վերնագրում «միջոցները շրջանառությունից հանելու» բառերը փոխարինվել են «միջոցների» բառով, իսկ նույն հոդվածի 1-ին մասում՝ «միջոցը շրջանառությունից հանելու» բառերը փոխարինվել են «միջոցի» բառով:	
3.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Հստակեցման և հասկացությունների ճիշտ կիրառության նպատակով առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416.1-ին հոդվածի 1-3-րդ մասերում «հանրագումարը յուրաքանչյուր» բառերից հետո լրացնել «հարկային» բառը, իսկ նույն հոդվածի 2-4-րդ մասերից հանել «թեմատիկ» բառը:	Ընդունվել է Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416.1-ին հոդվածի 1-3-րդ մասերում «հանրագումարը յուրաքանչյուր» բառերից հետո լրացվել է «հարկային» բառը, իսկ նույն հոդվածի 2-4-րդ մասերից հանվել է «թեմատիկ» բառը:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն		Նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնների խախտման համար պատասխանատվություն սահմանելու նպատակով առաջարկվում է նախագծում 5-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ հոդված, իսկ նախագծի անցումային դրույթների 6-րդ հոդվածը համարակալել որպես 7-րդ հոդված՝ «Հոդված 6. Օրենսգրքի 424-րդ հոդվածի՝ 1) վերնագրում «դրոշմապիտակներով» բառից հետո լրացնել «կամ նույնականացման միջոցներով» բառերը, 2) 1-ին մասում «գրանցումներին» բառերից հետո լրացնել «կամ նույնականացման միջոցներով	Ընդունվել է Նախագծում 5-րդ հոդվածից հետո լրացվել է հետևյալ որ 6-րդ հոդված, իսկ նախագծի անցումային դրույթների 6-րդ հոդվածը համարակալվել է որպես 7-րդ հոդված՝ «Հոդված 6. Օրենսգրքի 424-րդ հոդվածի՝ 1) վերնագրում «դրոշմապիտակներով» բառից հետո լրացնել «կամ նույնականացման միջոցներով» բառերը, 2) 1-ին մասում «գրանցումներին» բառերից հետո լրացնել «կամ նույնականացման միջոցներով	Ընդունվել է

			նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոններին» բառերը:»:	դրոշմավորման կանոններին» բառերը:»:	
5.	ՀՀ կառավարություն	1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 335-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ կետում «օրենքի» բառին նախորդող «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով ՀՀ հարկային օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ կետում «օրենքի» բառին նախորդող «Հայաստանի Հանրապետության» բառեր հանվել են:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով 381-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3.2-րդ մասով սահմանված է. «Կառավարության սահմանած դեպքերում եւ կարգով՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով»: Հատկանշական է, որ Նախագծով սահմանված չէ, թե ինչ ժամկետում է Կառավարությունն ընդունում քննարկվող նորմում նվաճ դեպքերը ու	Ընդունվել է Նախագծի 7-րդ հոդվածով սահմանվել է Կառավարության կողմից ընդունվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետ:	Ընդունվել է

			կարգը սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը: Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով սահմանել Կառավարության կողմից ընդունվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջը:		
--	--	--	---	--	--